

## ՀԵԶԻԱԹԻ ՏԵՔՍԻ ՄԻՋՏԵՔՍԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՔՍԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

### ՏԻԳՐԱՆՈՒՅԻՆ ՆԵՐՍԵՍՅԱՆ

Արդի լեզվաբանության ուշագրավ հարցերից մեկը՝ միջտեքստայնությունը, մեր կարծիքով, ուրույն տեսք է ստանում հեքիաթի վերլուծության ժամանակ, քանի որ հեքիաթում առկա են ժողովրդական բանահյուսության այլ ժամրերից «մեջբերումներ»՝ ասացվածքներ, հանելուկներ, առակներ, երգեր: Ասսացվածքները հաճախ դառնում են նաև հեքիաթի վերնագիր: Այս ձևի մեջբերումը, ենթադրում ենք, հեքիաթի տեքստում դառնում է ավանդույթ և հեքիաթից հեքիաթ կրկնվելով՝ ամրապնդվում է ու դառնում տեքստի տիպի յուրահատուկ նշան, այսինքն՝ հուշում է այդ տեքստի հեքիաթ լինելու նախն: Փաստորեն, այստեղ խաչաձևվում է արդի տեքստի լեզվաբանության երեք կարևոր խնդիր՝ միջտեքստայնությունը, տեքստի նշանները և տեքստի տիպի հարցը:

Տեքստի լեզվաբանության և տեքստի տեսության զարգացմանը զուգահեռ՝ մեծ տարածում գտավ «տեքստի նշաններ» հասկացությունը: Անշուշտ, ցանկացած տեքստ կարելի է վերլուծել և բառային, և ձևաբանական, և շարահյուսական մակարդակներով, միևնույն ժամանակ դրանք կարելի է քննել ըստ տեքստի նշանների: Վերջինները, ինչպես գրում է Վ. Ա. Լուկինը, կարող են համբնկնել լեզվական նշանների հետ, սակայն դրանց նշանակությունը և գործառույթը տեքստում սկզբունքորեն այլ է<sup>1</sup>:

Տեքստի նշաններից ամենաուժեղ դիրքում, անշուշտ, տեքստի վերնագրերն են, որոնց գործառույթները և նշանակությունը բազմաթիվ են: Նախևառաջ, վերնագիրը տեքստերը մեկը մյուսից տարբերելու գործառույթ ունի, ու եթե անգամ որևէ տեքստ վերնագրված չէ, տեսաբաններն անպայման այն վերնագրում են՝ թեկուզ վերնագիր դարձնելով առաջին բառերը, ինչպես արվում է բանաստեղծական ժողովածումներում: Օրինակ՝ «Պուշկինի անավարտ արձակ գործերը վերնագրված են ըստ դրանց առաջին բառերի՝ «Գости съезжались на дачу»:

Վերնագիրը կարող է գործածվել նաև առաջին, օրինակ գրքերի քարտարաններ կազմելիս: Եվ այդ դեպքում շփոթից խուսափելու համար նշվում է նաև հեղինակի անունը: Կրկնվող վերնագրերը ստեղծում են հատուկ միջտեքստայնություն: Կարելի է նշել դրանց երկու տեսակ՝ գիտակցված և չգիտակցված, որոնց տարբերակման հարցն այնքան էլ ակնհայտ չէ:

Այս առումով վերնագիրը, ըստ Լուկինի, կատարում է հատուկ տիպի՝ պայմանական նշանի և ցուցանշանի գործառույթներ: Սկզբում, երբ մենք ծանոթ չենք գրքի բովանդակությանը, մեզ համար վերնագիրը ոչնչով պայմանավորված չէ, սակայն գիրքը կարդալուց հետո ընթերցողն իր վար-

<sup>1</sup> Տես Լուկին Վ. Ա. Խոջեստվություն տեքստի առաջնային տարրերակ՝ <http://www.gramota.ru/biblio/research/hudtext0/>

կածն է ստեղծում, թե ինչու է ընտրված այս վերնագիրը. այդպիսով՝ վերնագիրը դառնում է ցուցանշան, ինչպես, օրինակ, մարդու կամ այլ շնչավորի հետքը:

Լուկինը, ինչպես մյուս տեսաբանները, հակված է վերնագիրը համարելու նաև անդրտերստային նշան:

Վերնագիրը միաժամանակ ակնարկում է տեքստի բովանդակությունը: Դրա համար շատ հեղինակներ տեքստը վերնագրում են ավարտից հետո, կամ այն վերնագրում են ուրիշները. բազմաթիվ տեքստեր ավելի հին են, քան դրանց վերնագրերը:

Ստեղծողի կամ գրողի և լսողի կամ ընթերցողի վիճակները տարբեր են. ընթերցողը առաջինը վերնագիրն է տեսնում, իսկ գրողը հաճախ այն դնում է ավարտելուց հետո: Դա վերաբերում է նաև նախաբանին:

Տեքստը կարդալուց հետո վերնագիրը ծեռք է բերում այլ նշանակություն. այն պարունակում է ամբողջական տեքստի բովանդակությունը: «Գիրքը հենց մինչև վերջ ծավալված վերնագիրն է, վերնագիրը՝ երկու-երեք բարի սահմաններում տրված գիրքը»<sup>2</sup>:

Վերնագիրը հաճախ կապող դեր է կատարում՝ բազմիցս կրկնվելով տեքստում: Դա վերաբերում է նաև հատուկ անուններին: Դրա կրկնությունը տեքստի սկզբում, ըստ Լուկինի, կատարում է թեմատիկ, իսկ վերջում՝ ռեմատիկ դեր:

Վերնագիր՝ որպես տեքստի ուժեղ նշանի դերը ժողովրդական հեքիաթում շատ յուրօրինակ է: Եթե նույնիսկ հեղինակային ստեղծագործության մեջ չվերնագրված տեքստեր կան, ապա ավելի բարդ է բանահյուսական հեքիաթի վերնագրի հարցը:

Լինելով բանավոր ստեղծագործություն՝ հեքիաթը չունի մեկ հեղինակ և բնականաբար չի վերնագրվել հեղինակի կողմից: Կարելի է ենթադրել, որ հեքիաթները, ինչպես մյուս հին տեքստերը, չեն ունեցել վերնագիր (տե՛ս «Краткая литература на энциклопедия»), հավանական է, որ հեքիաթը վերնագրել են ասացողները, և այդ ձևով էլ այն գրառվել է:

Գրառումը հեքիաթի համար նոր փուլ է: Բանահավաքները նաև այսպիսի խնդրի առջև էին կանգնել. տեքստերը կրկնվում էին, իսկ դրանք տարրանշատելուն նպաստում է վերնագիրը: Բանահավաքի գործունեությունը տարբերակների որոնումը, համեմատությունը, ընտրությունն է, իսկ տեքստաբանի գործը տպագրված տեքստերի հետ է: Մեր վերլուծության ժամանակ պետք է բավարարվենք տպագրված ժողովրդական հեքիաթներով:

Դայ ժողովրդական հեքիաթների ակադեմիական հատորների կազմողները դրանց առաջաբաններում նշել են, որ հեքիաթների վերնագրերը թողնվել են այնպես, ինչպես աղբյուրներում են, կամ ինչպես դրանք անվանել են բանահավաքները: Սակայն եթե վերնագիրը կրկնվել է, մեկը փոխել են: «...իսկ այն հեքիաթները, որոնք չունեն վերնագիր, կամ միայն կրում են «հեքիաթ» վերնագիրը, ելելով բովանդակությունից, մենք ենք դրել, տվյալ հեքիաթին վերաբերող ծանոթագրության մեջ ցույց տալով»<sup>3</sup>:

Կան վերնագրերի մի շարք դասակարգումներ, օրինակ՝ բարգմանության հայտնի տեսաբան Ի. Լսիի դասակարգումը: Նա վերնագրերը բաժա-

<sup>2</sup> Кржижановский С. Д. Поэтика заглавий. М., 1931, с. 3.

<sup>3</sup> «Дај ժողովրդական հեքիաթներ», հ. I, Եր., 1959, էջ 14 և հ. IX, Եր., 1968, էջ 8:

նում է երկու տիպի՝ ա) նկարագրական, ինֆորմատիվ, տեքստի թեման անմիջականորեն հաղորդող, գլխավոր հերոսի անունը պարունակող, բ) սինվոլիկ, թեման, հարցադրումը, անգամ մթնոլորտը սեղմ հաղորդող<sup>4</sup>:

Եթե որպես հիմք ընդունենք Լևի դասակարգումը, ապա կնկատենք, որ ժողովրդական հեքիաթների վերնագրերը հիմնականում համապատասխանում են նրա դասակարգման առաջին կետին:

Ժողովրդական հեքիաթների վերնագրերի գործառույթն առավելապես ցուցանշանային է և ինֆորմատիվ: Որանք ամենապարզ վերնագրեր են՝ տեքստի հետ պարզունակ կապերով: Որպես կանոն՝ դրանք գլխավոր հերոսների անունները, մականուններն են, կամ նշում են նրանց սոցիալական վիճակը, զբաղմունքը, բնավորության գծերը, վերնագրված են ըստ գլխավոր հերոսների՝ «Դավթի հեքիաթը», «Չոփչու հեքիաթը», «Сказка о б Иване-царевиче, жар-птице и о сером волке», «Сказка о Ерше Ершовиче, сыне Щетининникова»: Այս շարքի վերնագրերում կարող են լինել կամ չլինել «հեքիաթ», «պատմություն» բառերը՝ «Աբգար թագավոր», «Ասլանդադի», «Անառակ որդին», «Մարյա Մօրեվնա», «Յոլոտայ րինկա», «Иван Быкович»<sup>5</sup>:

Կան նաև զուտ սյուժեն մատնանշող վերնագրեր՝ «Գյուղացու խելոք պատասխանը», «Ուրբաթի կօրուստը», «Зимовье зверей», «Солдат избавляет царевну»:

Որպես հատկապես հեքիաթների վերնագրերի առանձնահատկություն՝ հարկ է նշել, որ շատ վերնագրեր մեկ այլ ժամրի ստեղծագործություն են, օրինակ՝ ասացվածք: Որանք ամենասերտ կապի մեջ են հեքիաթի իմաստի, ասելիքի հետ, և այն տպավորությունն է ստացվում, որ տվյալ հեքիաթը ստեղծվել է այդ ասացվածքը հաստատելու, մեկնարանելու համար՝ «Յում կաթնակերին էթիրար չկա», «Ընկեր, բարեկամ ունեցիր, բայց հույսդ քեզ Վրա դիր»: Նման վերնագրերը ռուսական հեքիաթներում ավելի հազարեալ են՝ «Старая хлеб-соль забывается»:

Հեքիաթի վերնագիր են նաև տեքստում հնչած խոսքերը, դրանք կամ արդեն վերը նշված առաձները կամ թևավոր խոսքերն են, կամ պարզապես հեքիաթում կարևոր դեր ունեն՝ «Սէվ էս իւզելի», թէ սվտակյ», «Աշխարքը դիւզըթոնը կտանի», «Էս էլ քու քսան կօպէկը», «Պո պշչեմու վելենի», «Поди туда – не знаю куда, принеси то – не знаю что»:

Միջտեքստայնության կարևոր հասկացություններից մեկն էլ մեջբերումն է: Լուկինը նշում է մեջբերման մի քանի բնութագրում. մեջբերումը ունենում է հեղինակ, որը կամ նշվում է, կամ չի նշվում, մեջբերումն առնվում է չակերտների մեջ և այլը<sup>6</sup>:

Այս բոլորը, անշուշտ, դասական հեղինակային տեքստերի մասին է, սակայն հեքիաթը այս առումով նույնպես ունի իր առանձնահատկությունները: Հեքիաթում գործածվող, կրկնվող արտահայտությունները հիմնականում տարածված ձևակերպումներ են, որոնց տեղյակ է տվյալ լեզվով խոսող կամ տվյալ տարածքում ապրող հանրությունը: Այսինքն՝ բանա-

<sup>4</sup> Տես Լևի Ի. Искусство перевода. М., 1974, էջ 170-177:

<sup>5</sup> Օրինակները բերվում են ըստ հետևյալ ժողովածուների՝ «Դավթի ժողովրդական հեքիաթներ», հ. 1, Եր., 1959, «Դավթի ժողովրդական հեքիաթներ», Եր., 1980 և «Народные русские сказки А. Н. Афанасьевы в трех томах». М., 1958:

<sup>6</sup> Տես Բ. А. Լукин, նշվ. աշխ.:

հյուսական տեքստի, տվյալ դեպքում՝ հեքիաթի մեջբերումները ճանաչելի են, բայց հայտնի չէ կամ կորել է դրանց սկզբնաղբյուրը:

Մեջբերում կարող է լինել տեքստի ցանկացած հատված, այդ թվում՝ վերնագիրը, որի վկայությունն են արդեն բերված օրինակները, երբ վերնագիրը ասացվածք կամ առածք:

Թեև տեքստերի մեծ մասի համար ինարավոր է գտնել ընդհանուր տեքստային նշաններ, մեջբերումներ, սակայն հեքիաթի տեքստն ունի այնպիսի մի մեջբերում, որը հատուկ է միայն նրան և միաժամանակ կատարում է ժանրորոշչի դեր: Խոսքը մուտքի ցուցիչների կամ բանաձևերի մասին է, որոնք ամենահսկական մեջբերում են, քանի որ գրեթե նույնությամբ կրկնվում են հեքիաթների մեծ մասում: Կան, անշուշտ, հեքիաթներ, որոնք չունեն սկզբի ցուցիչներ, այդուհանդերձ ցուցիչները հեքիաթի տեքստի կառուցվածքի ամենաբնորոշ բաղկացուցիչներն են<sup>7</sup>:

Հեքիաթի մեջբերումը յուրատեսակ է, քանի որ ինարավոր չէ դատել դրա գիտակցվածության մասին: Մեջբերումը չափազանց հատկանշական և կարևոր է հեքիաթի տեքստի համար. հեքիաթի մեջբերումները ամենատարբեր ծերով՝ նույնությամբ կամ տարբերակներով, կրկնվում են հեքիաթներում: Դրանք մի քանի տեսակի են. նախ՝ միահյուսված են պատումի հետ, ինչպես՝ «Շատ գնաց, թե քիչ գնաց, աստված գիտի, գնաց ընկավ մի կարմիր ֆող, մեշի մեջ ծառերը՝ կարմիր, ֆողը՝ կարմիր, քարը՝ կարմիր», «Գնաց, ձիերի միշքին ձեռ տվուց, ձիանը բիրաղի մեշքները կռացրին, դիմացան ոչ դրա ձերի տակին: Եկավ, տեհավ, որ դրան տակին մի քոսոտ ձի կա կապած, աշկից քցած. ձեռը տվուց ձիու յալին, շատ թափեթափ տվուց, տեհավ, որ ձին հեք եռըն չի», «Ասլանդադին հալը տառեկան չկար, բայց էնքան ուժեղ էր, վեր տրդեների խետը խաղալուն վարին ծեր էր տալի, մէ վնաս խասուցես էր: Վարի թէվէն պրնես էր, թէվն էր տեղէն տուս իկյալի, վարին մէ սիլլա էր տալի, վիզը ծովէս էր, վարի անգյան էր պոնէլի, անգյան էր քյօքյէն յլէլի»:

Շատ ճանաչելի է երկու կամ երեք ճանապարհների մեջբերումը. «ճանապարհ ընկան, տեսան՝ երեք ճանապարհ, մեջտեղը մի ծերունի նստած... Ասեց.- Մինը Թիֆլիս ա եթըմ, մինը հ'երևան ա եթըմ, համա էս ճամփեն էրողը ետ չի գալիս, գեղան-գյալմազի ճամփեն ա», «Դրանք մի ճամփա բռնեցին գնացին: Գնացին, տեհավ՝ իրեն ճամփեն բաժանվըն ա էրկսի. ճամփեքանցի մինը փորցանքով լիքն էր, իրմա էն մինը անփորցանք էր»:

Մեջբերվող խոսք են հեքիաթներում կրկնվող ուղղակի խոսքերը՝ «Դևան ասեց. - «Մեր ադաքը էն ա, որ հ'իրիկունը դոնաղը կպրենք, հ'առավոտը կկրվենք»», «Այ տղա, օցն իւր պօռտօվ, դուշն իր թէվօվ տաղ չէր էկյլի, տիւ հ'շքար էկար: Ձ՞ս վախէնալի մէ կլխանի դէվէն», հերոսն ասում է՝ «Ուստա, դու լավ մարք չես: ... Նրա իըմար, որ ես թէզնից ուզեցի հինգ փութ ֆընդուխտ, դու գնացիր չորս փութ բերիր, ես էլ դու կշտին մնըն չեմ»:

Մեջբերումներ են ամենատարբեր կախարդական խոսքերը և հերոսին տրվող շնորհները, որոնք ևս անմիջականորեն մատնանշում են հեքիաթի ժանրը.

«Զաքանչս ճիպոտով ախչկանս էլ ա տալիս, ասըն ա. «Օց դառնաս,

<sup>7</sup> Տե՛ս **S. Ներսեսյան**, Սկզբի և ավարտի ցուցիչները հայկական և ռուսական հեքիաթներում, «Եջմիածին», 2008, № 3, էջ 97:

մըզվէլ իմանաս վօչ, վօր Սինամ թաքավօրը թախտին նըստած ա, քու թլիս բաց չլի»»: «Ծղզա՝ արեվ ըլի, լացի՝ անձրօվ իկյա, ուզի շուռ իկյա՝ փէշի տակէն ծաղիկ թափի, հար քյելուն էլ մէ քիսա վոսկյի կլիսի տակն ըլի, լողացուցէն տահյ ծրով՝ վոսկյի յըլի, պաղ ճրօվ լողուցէլուն արծաթ յըլի»:

Մեջբերվող խոսք են ամենատարբեր խորհուրդներն ու պատգամները, որոնք կարող են լինել ինչպես կարճ, այնպես էլ երկար՝ պարտադիր պահվածքով ու խոսքերով: Դրանք ասվում են ինչպես արթմնի, այնպես էլ երազում, ասում են և մարդիկ, և կենդանիները, հաճախ՝ հերոսի ձին: Օրինակ՝ թագավորն ասում է որդիներին. «Գնացեք, համա ինձանից ձեզ խրատ ըլի, վօր քշերները վերանա դըզըմ, յա կամ թէ չէ խօրաբա գեղըմ ու քըղաքըմ կենաք վօչ: Մին էլ ամեն քշէր մինդ պահակ կըկէնաք, մնացածդ կըքընէք»:

Երազում ասվում է. «Ետ քարը պոկա, էտ քարի տակին իրեք հատ ծովեղեն ձիու գյամ կա: ... Երկուսը կապա մեշկդ, մինը կախ արա ծովը, ծովեղենը դուս կզա: Նա կուգենա, որ քեզ կուլ տալ, դու ջալդ արա՝ ձեռդ քա ձիու յաղը, դայիմ բռնա: Են վախտը գյամը տու ձիու բերանը»:

Զին խորհուրդ է տալիս. «Կէքաս, քառասուն օթախ բաց կանես, քառասուն օթախը անց կկենաս, մի հատ օթախ՝ ոսկով զարթարած, ախչիկը էտ օթախըմը քնած ա, մենակ թէ՝ վոա չպրծնես, պաչես, կվեկենա, միսդ կքրքրի: Էտ հասակի ախչիկ ա, նրա էրեսը իսան չի տեհել: Եռեսուն ութը օր քնել ա, մնըմ ա էրկու օր, որ վե կենա: Մի հատ թախտ կա էտ օթախըմը դրած, վոին մի բութուրգա կա, մի ըստաքան. Յազարեն դաստան բիլբուլը ծովի վորին կախ տված ա. որ նի կմնմես օթախը՝ հ'առաջինը գլուխ կտաս Յազարեն դաստան բիլբուլին, ետո կդառնաս բութուրգին. ետո ոնների տակի էրկու շամադանը վե կունես, կտանես զլխավիրնը վե կդնես: Գլխավրինը կրերես ոնների տակը կրնես ու ձեռդ կառնես ըստաքանը բութուրգից կլըքնես: ... Կիսնես, կասես. «Օխայ, ես ինչ անուշ ջուր էր. Ես իմ կյանքըմն ըսենց ջուր չի խմած»: Բիլբուլը կասի թե. «Յազար բարի ես էկել», խոսալ չես»:

Ժողովրդական հեքիաթը, փաստորեն, դժվար է պատկերացնել առանց մեջբերումների. հեքիաթասացը ամեն անգամ պատմելիս ներկայացնում է իր լսած պատմությունը, որտեղ արդեն կան ամենատարբեր մեջբերումներ, և ինքը, հետևելով սյուժետային գծին, ամեն անգամ ավելացնում է իր տեքստը կամ այդ ամենը կապում է իր տեքստով, ներկայացնում է իր տարբերակով, և ստացվում է երկրորդ մակարդակի մեջբերում:

Լուկինը նշում է. «Նախադեպ տեքստերը ոչ միայն գեղարվեստական գրականությունից մեջբերումներ են, այլև միֆեր, ավանդություններ, բանավոր-բանաստեղծական ստեղծագործություններ, առակներ, լեզենդներ, հեքիաթներ, անեկդոտներ և այլն: Նախադեպ տեքստ կարող է լինել նաև հասուլ անունը»<sup>8</sup>:

Լուկինի նշած գրեթե բոլոր նախադեպ տեքստերը հանդիպում են հեքիաթում:

Յայտնի է, որ հաղորդակցական գործընթացի ժամանակ մեծ դեր ունեն յուրաքանչյուր իրադրության համար արդեն իսկ մշակված պատրաստի արտահայտությունները: Հեքիաթի տեքստն ուսումնասիրելիս նկատում ենք, որ հեքիաթների մեջբերումների մեծ մասը հենց նման արտա-

<sup>8</sup> Լукиն Բ. Ա., նշվ. աշխ.:

հայտություններ են, պատրաստի բանաձևեր, որոնցից օգտվում է հեքիաթասացը: Այնինչ գեղարվեստական գրականության հեղինակն իր հայեցողությամբ է օգտվում մեջբերումից: Նա աշխատում է, ի տարրերություն հեքիաթասացի, չօգտվել պատրաստի արտահայտություններից, այլ ընդգծել հենց ստեղծագործական կողմը: Հեքիաթի պատրաստի արտահայտությունները և ներկայացված ցուցիչներն են, և արդեն բերված գրեթե բոլոր մեջբերումները:

Ի դեպ, Վ. Յա. Պրոռազը, ուսումնասիրելով հեքիաթի «ձևաբանությունը» և թվարկելով հեքիաթը կազմող կրկնվող գործառույթները, հիշատակում է նաև դրանց բնորոշ մի քանի խոսքային բանաձևեր, բայց չի ծանրանում դրանց վրա, քանի որ դրանք իր բուն նյութը չեն<sup>9</sup>:

Մենք ներկայացրինք հեքիաթի տեքստի բաղկացուցիչները, սակայն սխալ է կարծել, թե հեքիաթը մի հասարակ հավաքովի խաղալիք է, որի մասնիկներն իրար կապելով՝ հնարավոր է նոր և ոչ պակաս լավ հեքիաթ ստանալ: Խնդիրն էլ հենց այն է, որ դա կարծեցյալ հեշտություն է: Իրականում լավ հեքիաթ ստեղծելը շատ դժվար է, որի մասին վկայում են անվանի գորոնները: Զայ ամենամեծ հեքիաթագիր Յովհաննես Թումանյանը նշում է. «Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է, նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթի են ձգտում»<sup>10</sup>:

Հեքիաթը պետք է ունենա նի շարք այլ հատկանիշներ ևս, որպեսզի այն հեքիաթ լինի: Գեղարվեստական գրականության մեջ կան բազմաթիվ հեղինակային հեքիաթներ, սակայն ամենակենսունակը և ամենասիրվածը հենց ժողովրդական հեքիաթների հեղինակային մշակումներն են, որոնք կատարել են Գրիմ Եղբայրները, Շառլ Պերոն, Ալեքսանդր Պուշկինը, Յովհաննես Թումանյանը:

**ТИГРАНУИ НЕРСЕСЯН – *Интертекстуальность и текстовые знаки сказочного текста.*** – Текстологический анализ народной сказки показывает, что в сказке встречаются “цитаты” из других жанров фольклора: поговорки, загадки, басни, песни, благодаря чему интертекстуальность сказочного текста становится многожанровостью. “Цитаты” подобного рода можно рассматривать и как текстовые знаки, которые в данном случае указывают на тип текста. В статье, выполненной на материале армянских народных сказок, речь идет, в частности, о взаимосвязях интертекстуальности, текстовых знаков и типа текста.

**TIGRANUHI NERSESYAN – *The Intertextuality of the Fairy Tale Text and the Textual Marks.*** – The textual analysis of fairy tales shows that other “quotes” of folklore can be found in them: proverbs, riddles, fables, songs, thanks to which the intertextuality of the fairy tale text becomes that of possessing various genres. These quotes can be detected as textual marks, which in this given case indicate the type of the text. In this very article written on the material of Armenian fairy tales, the relations of intertextuality, text marks and text types are being observed.

<sup>9</sup> Տես Պրոռ Վ. Յ. Մорфология волшебной сказки, Исторические корни волшебной сказки, М., 1998:

<sup>10</sup> Ա. Թումանյան, Յուշեր և զրույցներ, Եր, 1986, էջ 225: